ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАНА

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 95

«6» 10 2015թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասով, Ձեզ ենք ներկայացնում՝ Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 1 հոկտեմբերի 2015 թվականի կայացած թիվ 4 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝6թերթ

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 04703556

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 02.7/1/0535-15
06 10 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«1» հոկտեմբերի 2015 թվական թիվ 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 1-ի, թիվ 4 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	4կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Հովհաննիսյան			
Հ. Ասատրյան			
Ա. Ասատրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական հոկտեմբերի 1
գ. Մրգաստան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 31 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՆԻՍՏԻ

31.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի, ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

32.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

33.ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ՄՐԳԱՍՏԱՆԻ Գ/Պ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«1» հոկտեմբերի 2015 թվական թիվ 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 69-րդ հոդվածի առաջին պարբերությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2015թվականի երրորդ եռամսյակի բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում բյուջեի ընթացքի մասին հաղորդումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Հավանություն տալ՝ Մրգաստան համայնքի ղեկավարի հաղորդումը, 2015 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	4կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Հովհաննիսյան			
Հ. Ասատրյան			
Ա. Ասատրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական հոկտեմբերի 1
գ. Մրգաստան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Հ. Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի
ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 32 ՈՐՈՇՈՒՄ

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԲՅՈՒՋԵՅԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Հարգելի ավագանու անդամներ և համայնքի բնակիչներ, Ձեզ եմ ներկայացնում Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքում 2015թ. երրորդ եռամսյակում բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումը, բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինձ ընձեռնված լիազորություններով.

Իմ կողմից ապահովվել է գյուղապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը: Իմ հանձնարարությամբ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից կատարվել է հետևյալ աշխատանքները՝

Կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն՝ համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի և ավագանու անդամների մոտ:Ընդունելության եկած քաղաքացիների դիմումներին և բանավոր հարցադրումներին իմ և ավագանու անդամների, ինչպես նաև աշխատակազմի քարտուղարի կողմից տրվել է սպառիչ պատասխան՝ սահմանված ժամկետներում:

Ղեկավարվելով «ՏԻՄ» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր լիազորություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում իմ իրավասության սահմաններում օրենքով սահմանված կարգով հրավիրվել և վարվել է ավագանու 2 նիստ, որից 1-ը արտահերթ, 1-ը հերթական:

Աղբահանության գծով իրականացվել են աշխատանքներ:Ըստ ծրագրի հավաքագրվել և մուծվել է 25 000 /քսանհինգ հազար/ դրամ աղբահանության վճար:

Համայնքում կատարվում է աղբահանություն, շաբաթական երեք օր:

Հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից վերահսկվել է հարկերի և տուրքերի հավաքագրման աշխատանքները.

Հողի հարկը երրորդ եռամսյակի կտրվածքով 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 2 518 910 /երկու միլիոն հինգ հարյուր տասնութ հազար ինը հարյուր տաս/ դրամ:

Գույքահարկ շենք շինությունների համար նախատեսված՝ 80 000 /ութսուն հազար/ դրամի դիմաց, կատարվել է հավաքագրում՝ 78 297 /յոթանասունութ հազար երկու հարյուր իննսունյոթ/ դրամ:

Փոխադրամիջոցի գույքահարկի համար 1 000 000 /մեկ միլիոն/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 2 787 977 /երկու միլիոն յոթհարյուր ութսունյոթ հազար ինը հարյուր յոթանասունյոթ/ դրամ:

Տեղական տուրքերի համար՝ 31 500 /երեսունմեկ հազար հինգ հարյուր/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 7000 /յոթ հազար/ դրամ:

Վարձակալական հողերի համար՝ 225 000 /երկու հարյուր քսանհինգ հազար/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 59 420 /հիսունինը հազար չորս հարյուր քսան/ դրամ:

Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններ:

Հողօգտագործման բնագավառում՝
Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:
Կատարվել է նաև հողաչափական աշխատանքներ, բնակիչների դիմումների հիման վրա:
Ներկրվել է ցորենի սերմնացու, որը բաժանվել է խոշոր հողատերերին:
Կրթության և մշակույթի բնագավառում՝
Իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը:Գյուղի դպրոցում իրականացվող միջոցառումները արժանանում է գյուղապետարանի աջակցությանը:
«Գիտելիքի օրվան» նվիրված միջոցառմանը 2015-2016ուս. տարում առաջին դասարան հաճախող թվով 17 երեխաներին, գյուղապետարանի կողմից նվիրվել է պայուսակներ և գրենական պիտույքների հավաքածու, 150 000 /հարյուր հիսուն հազար/ դրամ արժողությամբ:
Մեր կողմից կազմակերպվել է մեկ միակողմանի ծնողազուրկ երեխայի, /անապահով ընտանիքից/ 20 օրյա հանգիստը ճամբարում:
Հատկացվել է՝ սոց օգնություն անապահով ընտանիքներին 1 305 000 /մեկ միլիոն երեք հարյուր հինգ հազար / դրամի չափով:
Այսքանը երրորդ եռամսյակի ընթացքում, բյուջեի կատարման ընթացքի մասին:

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«1» հոկտեմբերի 2015 թվական թիվ 33

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ սոցիալապես անապահով ընտանիքներին, դրամական աջակցություն ցուցաբերելու մասին.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Այսեր Հայկազի Ասատրյանին տատիկի մահվան կապակցությամբ, հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
2.Գայանե Միսակի Հակոբյանին սկեսրոջը բուժման տանելու նպատակով, հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
3.Հռիփսիմե Լյովայի Սահակյանին բուժման գնալու նպատակով, հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
4.Ազիզ Վազիրի Ջանգիրյանին,որպես սոցիալապես անապահով ընտանիքի հատկացնել՝ 20 000 /քսան հազար/ դրամ:
5.Թամարա Ռազմիկի Հակոբյանին բժշկական հետազոտություն անցնելու նպատակով, հատկացնել՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ:
6.Գուրգեն Եղիազարի Եղիազարյանին բուժման գնալու նպատակով, հատկացնել՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ:
7.Զոյա Հրանտի Եղիազարյանին, որպես միայնակ թոշակառու բուժման գնալու նպատակով հատկացնել՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ:
8.Նորայր Հրաչի Ավագյանին բուժման գնալու նպատակով հատկացնել՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ:
9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	4 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Հովհաննիսյան			
Հ. Ասատրյան			
Ա. Ասատրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական հոկտեմբերի 1
գ. Մրգաստան